

կապը իր կարգին չի նշանակեր, որ անպայման մակարդակներու միջեւ համաձայնություն պետք է ըլլայ. այլ խօսքով մետա-բարոյագիտությունը կրնայ հակասել բարոյագիտության մէկ կանոնին եւ ասիկա պատճառ կը դառնայ, որ երկու մակարդակներու վրայ ալ նոր քննարկումներ սկսին: Այս առնչութեամբ, փիլիսոփայութեան պարտականությունը կը նկատուի՝ բարոյագիտութեան եւ մետա-բարոյագիտութեան միջեւ համոզիչ եւ ընդունելի հաւասարա-կշռութիւն մը գոյացնելը:

Մետա-բարոյագիտութեան չորս ոլորտները

Մետա-բարոյագիտությունը ուսումնասիրելու եւ անելի մանրամասնելու համար, կարելի է անոր վերաբերեալ չորս ոլորտներ զանազանել.-

- **Լեզուա-վերլուծական ոլորտ,**
- **Բարոյական համոզումներու ոլորտ,**
- **Էաբանական ոլորտ (Ontology)** եւ
- **Իմացաբանական ոլորտ (Epistemology):**

1. ԼԵԶՈՒԱ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Մետա-բարոյագիտութեան ուսումնասիրութեան ատեն, առաջին հերթին նկատի կ'առնուին՝ բարոյական արտայայտութիւններու լեզուն, օգտագործուած եզրերը եւ անոնց իսկական իմաստը: Մետա-բարոյագիտությունը, լեզուական վերլուծման ատեն, մասնաւոր կարեւորութիւն կու տայ մասնա-ւանդ այն եզրերու բնորոշման (Definition), որոնք երկու կամ անելի իմաստ-ներով կը ներկայանան:

Անգլիացի բարոյագէտ-փիլիսոփայ **Գ. Ե. Մուր**, իր լեզուա-վերլուծական երկերուն մէջ, կը զանազանէ եզրերու բնորոշման երեք տեսակներ.-

- **Անուանական բնորոշում**, որ յատուկ է հեղինակի մը (կամ գիտական խումբի մը), որ իրեն համար եզրի մը իւրայատուկ բնորոշում կու տայ. բան մը, որ միայն ի զօրու է իրեն (կամ գիտական խումբին) համար:
- **Դասական բնորոշում**, որ ընդհանուր առօրեայ կիրառում ունի, բնորոշում մը, որ կը գտնուի սովորական բառարաններուն մէջ. եւ
- **Իրական բնորոշում**, որ փիլիսոփայական բարոյագիտութեան համար ամենակարեւորն է. այստեղ կը յայտնաբերուի եզրի մը իրական (իսկա-կան) իմաստը:

Մետա-բարոյագիտությունը, եզրի մը իրական իմաստին կողքին, անելի խորը թափանցելով կը բնորոշէ անոր իսկական էութիւնը: Այլ խօսքով՝ *առաքինութիւն*, *արդարութիւն*, *բարոյական բարին*, բարոյական *պետք* է կամ *հարկ* է արտայայտութիւններու պարագային, այստեղ միաժամանակ կը բացայայտուին՝ թէ իրապէս ի՞նչ են անոնք, որպէս հասկացութիւններ: